

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 07.09.2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամից 18-ը (տասնութը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
6. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ- ուսումնական մասի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
9. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
10. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
11. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
12. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
13. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
14. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

15. Սարգսյան Արմենուհի Հակոբի — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

16. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ

17. Հարությունյան Քաջիկ Հակոբի — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)

18. Չարչոլյան Արթուր Էդվարդի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուստարում գործող ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու մասին (հիմք՝ ԿԳ նախարարության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում տիրող իրավիճակի և դասախոսների բողոքի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ» 2017թ.-ի հաշվետվություն)

Հաղ՝ Ռեկտորի պարտականություններ կատարող Ե. Մերոբյան

2. ՇՊՀ-ի Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Վոլոդյայի Յայլոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին
Հաղ՝ գիտական քարտուղար Կ. Պետրոսյան

3. ՇՊՀ-ի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանման մասին

Հաղ՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

4. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարում գործող ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու մասին (հիմք՝ ԿԳ նախարարության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում տիրող իրավիճակի և դասախոսների բողոքի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ» 2017թ.-ի հաշվետվություն)

Հաղ՝ Ռեկտորի պարտականություններ կատարող Ե. Մերոբյան

Պարոն Ե. Սերոբյանը ներկայացրեց, որ բարելավման հետ կապված գործընթացներն իրականացվել են նկատի առնելով ԿԳ նախարարության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում տիրող իրավիճակի և դասախոսների բողոքի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ» 2017թ.-ի հաշվետվությունը, ինչպես նաև նախորդ տարին դիտարկելով որպես ապրոբացիոն շրջան:

Պարոն Սերոբյանը նշեց այն ուղղությունները, որոնցում կատարվել են 2018-2019 ուստարում ուսումնական պլանների բարելավմանն ուղղված փոփոխություններ: Բարելավումը կատարվել է հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ օրենսդրությամբ հիմնական մասնագիտական կրթական ծրագրերում՝ ուսպլաններում պարտադիր առարկաների ներառումը՝
«Հայոց լեզու և հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների ներառումը անկախ մասնագիտություններից. հիմքը՝ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետ:
«Ֆիզիկական դաստիարակություն» առարկան առանց կրեդիտային հատկացման՝ առաջինից 4-րդ կիսամյակներում՝ ընդհանուր 128 ժամաքանակով. հիմքը՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ք ենթակետ:
«Բնապահպանություն/Էկոլոգիա»՝ առանց կրեդիտային հատկացման. հիմքը՝ «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դ ենթակետ:
«Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան առանց կրեդիտային հատկացման. հիմքը՝ ԱԻՆ որոշումը:
2. Բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ներում մասնակի փոփոխությունների են ենթարկվել ընտրովի դասընթացները:
3. Ավարտական աշխատանքներն են ավելացվել առկա բակալավրի 4-րդ և հեռակայի 5-րդ կուրսերի առաջին կիսամյակներում՝ 4 կրեդիտ հատկացումով, հատկացվեց նաև երկրորդ կիսամյակում՝ 12-ի փոխարեն 8 կրեդիտ:
4. Մագիստրատուրայի ԿԾ-ից հանվեց «Գիտելիքների գնահատում» համահամալսարանական առարկան, որը մնաց ընդամենը 1-2 մագիստրոսական ԿԾ-ում՝ ըստ մասնագիտության վերջնարդյունքային պահանջի:
5. Բակալավրի ԿԾ-ում բոլոր կուրսային աշխատանքներին հատկացվեց 6 կրեդիտ: Կուրսային աշխատանքները նախատեսվեցին բակալավրի առկայի 3-րդ կուրսի և հեռակա 4-րդ կուրսի առաջին երկու կիսամյակներում:
6. Մանկավարժի որակավորում շնորհող բոլոր մագիստրոսական ԿԾ-ներում «Հոգեբանամանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկան փոխարինվեց «Մանկավարժական հետազոտությունների

մեթոդաբանություն» առարկայով, իսկ «Կիրառական հոգեբանություն» առարկան դարձավ համահամալսարանական նշված ԿԾ-ների համար:

7. Մագիստրոսական մի շարք ԿԾ-ներում «SPSS վիճակագրական փաթեթ» համահամալսարանական առարկան փոխարինվեց նույն բնույթի այլ առարկայով՝ մասնագիտության վերջնարդյունքներից ելնելով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Սարգսյանը, որը հարց ուղղեց, թե ու՞մ կողմից է դասավանդվելու «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան և արդյոք կա՞ հաստատված ծրագիր: Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ առարկան ներառված է ռազմական ամբիոնի ուսումնական պլանների մեջ, անցած տարի կարդացվել է բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դասախոս՝ երկրաբան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Բաղրամյանի կողմից, այս տարի նույնպես նա է շարունակելու դասավանդել առարկան և այո՛, կա հաստատված ծրագիր՝ ներկայացված արտակարգ իրավիճակների նախարարությունից: Պարոն Ս. Սարգսյանի այն հարցին, թե Պարոն Բաղրամյանը սեյսմոլոգիա առարկան է դասավանդում բուհում և «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան բոլորովին կապ չունի վերոնշյալի հետ, նորից պատասխանեց պարոն Սերոբյանը, որ այո առարկայի ծրագիրը խիստ առանձնահատուկ է, իսկ դասավանդումն իրականացնելու համար պարոն Բաղրամյանը ԱԻՆ-ից ունի թույլտվություն և համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոն: Պարոն Ս. Սարգսյանն առաջարկեց, որ պարոն Սերոբյանը հետանուտ լինի այս հարցի առնչությամբ, ամբիոնի վարիչին հանձնարարի, որ գիտական խորհրդում ներկայացվի, թե ինչ հիմքերով է «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան դասավանդում տվյալ դասախոսը և հանձնաժողով կազմվի առարկայից դասալսումներ անցկացնելու համար՝ համոզվելու, որ առարկայի դասավանդումը ճիշտ հիմքերի վրա է դրված:

Պարոն Սերոբյանը առաջարկեց հաստատել ուսումնական պլանները՝ բարելավմանն ուղղված փոփոխություններով հանդերձ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2018-2019 ուստարում գործող ուսումնական պլանները՝ բարելավմանն ուղղված փոփոխություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

18անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Վոլոդյայի Յայլոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին
 Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին և համապատասխան փաստաթղթերը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Աննա Վոլոդյայի Յայլոյան	Մանկավարժության ամբիոնի դասախոս,	«Մանկավարժության տեսություն և պատմություն» (ԺԳ 00.01)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացնել փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վալերի Խաչատրյան (նախագահ), Թերեզա Խաչատրյան, Քաջիկ Հարությունյան (անդամներ):

Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վալերի Խաչատրյանը ներկայացրեց հետևյալ արդյունքը.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Աննա Վոլոդյայի Յայլոյան	18	0	0

Հաշվի առնելով, որ ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 18-ը. կողմ՝ 18, դեմ՝ 0, անվավեր՝ 0) Աննա Վոլոդյայի Յայլոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԺԳ 00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

18 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանման մասին

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը ներկայացրեց հարցին վերաբերող իրենց կենտրոնի կողմից կատարված առաջարկները, ըստ որի.

		Քանակ/ տարիներ	Ժամեր	Ընդամենը ժամեր	Գումար
1.	Մասնագիտական առարկաներ	6	20	120	300.000
2.	Ոչմասնագիտական առարկաներ	5	16	80	200.000
3.	Գիտական ղեկավար	5	50	250	625.000
4.	Թեմայի և ղեկավարի հաստատում				25.000
5.	Առաջատար կազմակերպության կարծիք				30.000
6.	Պրակտիկայի համար փոխանցում այլ կազմակերպություններ				40.000
	Ընդամենը				1.220.000

Առաջարկվում է հայցորդների դեպքում վարձավճարը 5 տարիների համար սահմանել տարեկան 300.000 դրամ, իսկ վճարովի համակարգի ասպիրանտների դեպքում 4 տարիների համար՝ տարեկան 375.000 դրամ: Ուսումնառության համար վճարվող ընդհանուր գումարը կլինի 1.500.000 դրամ:

Այժմ որոշենք նաև 1 կրեդիտի համար սահմանվող գումարը .

$$1.220.000 - 30.000 - 25.000 - 625.000 = 540.000$$

$$540.000 / 50 = 10.800 \text{ դրամ}$$

Առաջարկվում է 1 կրեդիտի համար սահմանել 10.000 դրամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Լ Մարտիրոսյանը, որը հարց տվեց, թե առաջատար կազմակերպության կարծիքի համար սահմանված գումարը համալսարանի հաշվից պետք է լինի, թե ուսանողը վճարի:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ ուսումնասիրելով այլ բուհերի փորձը՝ ուսանողն է վճարում:

Ս. Սարգսյանը նշեց, թե ինչքանով է օբյեկտիվ, որ հայցորդը գումար վճարի, սակայն բացասական կարծիք գրվի:

Ե. Սերոբյանը չհամաձայնեց պարոն Սարգսյանի հետ՝ հակադարձելով, որ բացասական կարծիք գրելը միևնույն է որոշակի աշխատանք ու ժամանակ է պահանջում, որը նույնպես պետք է վճարվի:

Ք. Հարությունյանը նշեց, որ, կարծես ուսանողի շահերը սրանով ոտնահարվում են, քանի որ հիմքեր չկան նման գումարներ սահմանելու:

Ե. Մերոբյանը նշեց, որ երբ մենք այլ բուհերի օրինակն ենք վերցնում, սակայն վարձավճարի ավելացման համար օրենքով պաշտպանված հիմքեր չունենք, առաջարկը չենք կարող ընդունել ու հաստատել, ուստի առաջարկեց հարցը հետաձգել, անդրադառնալ դրան առաջիկա գիտական խորհրդում, երբ բուհի գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից հիմնավորված կներկայացվի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանումը՝ վարձավճարի գոյացման մեթոդաբանությանը համաձայն, ինչպես նաև օրինական ուժով սահմանված հիմքեր կունենան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանման մասին հարցը հետաձգել, անդրադառնալ դրան առաջիկա գիտական խորհրդում, երբ բուհի գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից կներկայացվի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանումը՝ վարձավճարի գոյացման մեթոդաբանությանը համաձայն, ինչպես նաև օրինական ուժով սահմանված հիմքերով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

18 անդամ. կողմ՝ 15, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ե. Մերոբյան

Գիտական խորհրդի
քարտուղար՝

Կ. Պետրոսյան

Արհմիութենական
կազմակերպության նախագահ՝
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկան՝
Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝

Վ. Խաչատրյան

Բ. Պողոսյան

Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետի
տեղակալ՝

Ե. Տոնոյան

Ուսումնագիտական
խորհրդատվական կենտրոն-
գրադարանի տնօրեն՝
Ֆինանսատնտեսական
վերլուծությունների,
ծրագրավորման և
հաշվապահական հաշվառման
բաժնի վարիչ-գլխավոր
հաշվապահ՝

Թ. Խաչատրյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի
պրոֆեսոր՝

Ռ. Քալաջյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի
պրոֆեսոր՝

Ս. Սարգսյան

Անգլերեն լեզվի և
գրականության ամբիոնի
պրոֆեսոր՝

Հ. Դրմեյան

Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի դոցենտ՝

Ս. Հովհաննիսյան

Մանկավարժության ամբիոնի
պրոֆեսոր՝

Ս. Հայրապետյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝

Ռ. Մարդոյան

Միջմշակութային
հաղորդակցության և

Թ. Մելիքյան

զբոսաշրջության ամբիոնի
ասիստենտ՝

Շ. Տեր-Աղամյան

Մանկավարժության ամբիոնի

դոցենտ՝
Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Գիտական
քաղաքականության, որակի
ապահովման և կառավարման
կենտրոնի տնօրեն՝
Աշխարհագրության,
կենսաբանության և քիմիայի
ամբիոնի դոցենտ՝
ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,
Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետ,
«Լրագրություն» 3-րդ կուրսի
ուսանողուհի,
Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետ,
«Սոցիալական աշխատանք», 3-
րդ կուրսի ուսանողուհի՝
Անգլերեն լեզու և
գրականություն IV կուրսի
ուսանողուհի՝
Մանկավարժության
ֆակուլտետ, «Մեթոդիկա» 3-րդ
կուրսի ուսանողուհի
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետ,
«Աշխարհագրություն» 2-րդ
կուրսի ուսանողուհի
ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն II կուրսի
ուսանող (մագիստրատուրա)
Ռեզմական ամբիոն,
«Նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն»
2-րդ կուրսի ուսանող՝
Պատմություն III կուրսի
ուսանող (հեռակա
բակալավրիատ)

Լ. Ղուկասյան
Լ. Հակոբյան
Ա. Սարգսյան
Լ. Մարտիրոսյան
Ջ. Ղազարյան
Ա. Խաչատրյան
Հ. Ավետիսյան
Է. Ավագյան
Լ. Հովհաննիսյան
Ք. Հարությունյան
Ս. Հարությունյան
Ա. Չարչոլյան

